

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԻՆ ԵՒ ՄԱՐԻՆ 50 ԹԻԼ:

Բաժանորդագրին ԿԱՆԹԻԿ՝ Թուրքիոյ Համար տարեկան 50 դրշ, Ռուսիոյ Համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու Համար 12 ֆր: — Վեցամեակ: Բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան Նաւահաղորդմ' եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի. այնուհետեւ բաժանորդագրին չը վճարողը կը դադրի թերթ ընդունելէ:

Շաբաթման տողը 2 զուրուշ:

# ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵԱԼԱԾԷՆ ԳՐԹԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ  
Առ ՏԵՐԵՒԵ-ՀՐԱՄԱՐԱԿԻՅ  
ՅՈՒՆԱՆ Գ. ՓԱՂԱԳԱՇԵԱՆ,  
Պոլիս, Պաշէ-Գաբու, Շէյխ-ուլ-Իսլամ Խան  
درعهده باغچه قوسنده شيخ الاسلام خاندان  
«زاغيك» غزیه سی مدیری پالاقشيان حوونان  
S'adresser à  
HOVNAN PALACACHIAN  
Directeur du journal arménien « Dzaghih »,  
Bahtché-Kapou, Chéikh-ul-Islam Han  
CONSTANTINOPLE

40 Փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարս

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻԻ 20

ՇԱԲԱԹ

29 ՄԱՅԻՍ 1893

ՆՍԻՐԱԳՐԱՊԵՏ Ա. Ա. ՍՈՒՐԷՆԵԱՆ

## ԱՆԳՐԱԳԱՐՁ ՇՐՋԱՆ

Կրնանք բաւական ստուգութեամբ ըսել, թէ մեր արդի մտաւոր շարժման թուականը կ'սկսի 1850էն, յորում անմահանուն Նիկողայոս Զօրայեան, արդի սերնդեան գրեթէ անձանթ անձնաւորութիւն մը, լուսաւոր ու դրական դաստիարակութեան սկզբունքն սկսաւ պարզել և ուսուցանել ազգին. քառասունէ աւելի տարիներ յետոյ. այդէ ապէս ժողովրդասէր, եւանդուն ու անձնուրաց Հայրդուլոյն գրուածները թէ՛ ոճոյ, թէ՛ իմաստի և թէ՛ զգացմանց ազնուութեան կողմանէ՝ մեր գրականութեան գեղեցիկ զարդերուն կարգը կը դասուին իրաւամբ. իւր կենսագրականը, զոր մտադիր ենք յառաջիկայիս ներկայացնել ընթերցողաց, մանրամասն ու ճշգրիտ գաղափարը պիտի տայ մտաւոր ու քաղաքակրթիչ շարժման՝ որու մէջ իրմէ զատ, մասն ունեցած են Պալեան Նիկողոս և Յակոբ ալեյերը, Տօթթօր Ռուսինեան, Միսէճի Անդրանիկ, Քրիստոստոսը Ղազարոսեան, Շահնազարեան Կարապետ վարդապետ, Պէշիքթաշեան, Իւթիւճեան Կարապետ, և այլք. ամէնքն ալ հոգւով ու սրտով Հայ, ամէնքն ալ քաջ ուսումնասիրած տոհմային պատմութիւնն ու քաղաքացիութիւնը, իսկամուտ հանրային պիտոյից: Այդ թուականէն մինչեւ 1875, քառորդ. դարու միջոց, մեր զգացումներու զարթոնումը, մեր հանրային գործոց ուղղութիւնը, մեր կրթական յառաջդիմութիւնը, մեր ընկերական և ընտանեկան բարոյց կրած փոփոխութիւնը, մեր կրօնական եւանդին զգացած տպաւորութիւնը, բոլորն ալ կը պարտինք վերոյիշեալներուն կամ անոնց աշակերտներուն, որք եթէ օրինակելի փափկութիւն, մեծ փորձառութիւն կամ առհասարակ անստգիւտ շահութեանց ու գրուածոց մէջ, ամէնքն ալ սակայն յարգել ու սիրել ուսուցին՝ ինչ որ հնոյն մէջ ազնիւ էր և օգտակար, կարեկից ու ձեռնտու եղան պանդըխ:

տին, ազգն օժտեցին լաւ դպրոցներով, լաւ կարգադրութիւններով, և այլն: Պատմութիւնը որու մէջ իրենց անուան համար արատաւոր էջ մը բանալ տալէ վախճան, պատմութիւնը գովեստիւք պիտի յիշէ այդ սերունդը, պարտաւոր թողլով ապագայ բարոյազգած սերունդները՝ մատուցանելու անոնց արժանաւոր յարգանք:

Եթէ վերջերս ջանք մ'եղաւ այդ հին ուղղութենէն շեղելու, և օտար գրականութեան ազան ու մրուրն եղող իրական կամ մտացածին դէպքեր ու կարծիքներ իրր ամենայնիւ գովելի ու հրապուրիչ ընծայելու, բարեբաղդաբար ժողովուրդն ատենին կը տեսնէ իր առջեւ բացուած կորստաբեր ճամբան, ու կ'անդադրաւորայ. այլ եւս ամթոյ տեղի մը կը համարուի պարահանդէսը, բաց գրուածներն հազիւ կը դանեն ընթերցողներ որ չեն համարձակիր պատուաւոր ընկերութեանց մէջ ի տես հանել զայն, կ'ինը կը հրաւիրուի իւր բնական յատուկ դրից մէջ ամփոփուիլ և տան տիրուհի ու միանգամայն խնամածու ըլլալ, ամուսնութեան արհամարհանքը շուայտութիւն կը նկատուի, հաւատքը վերստին իր արժանաւոր տեղը կը գրաւէ սրտերու մէջ, գրողներն այլ եւս կ'զգուշանան լայիշ նորազգացներ, զըզուեցուցիչ պատկերներ արտագրելէ, իմաստասէրն Եղիա, միանգամ եւս, եւ այս անգամ յարատեւութեամբ, կը ձեռնարկէ իր սրտայոյզ ոճով և գիւթիչ ճարտարութեամբ լսելի ընել իւր ազու ձայնը, ուրիշներ ալ կ'ոգեւորին և համեստ գրականութեան կենսաւետ զարկ մը տալու միջոցները կ'որոնեն:

Եւ Մաղիկ աւետաւորը կ'ըլլայ այս անդրադարձ շարժումի սկզբնաւորութեան. երանի՜ թէ ինքն իսկ յաջողէր այդ շարժման ծաւալն ընդլայնելու այնքան, որ ողջոյն ազգը պարփակէր իր մէջ:

Ա. Ա. ՍՈՒՐԷՆԵԱՆ

ՆԵՄԵԿ ԸՌ ԽՄԲԳՐՈՒԹՅՈՒՆ

Տէր Խմբագրապետ

Ձեմ կրնար դատել թէ՛ դիմաց արտայայտութենէն ո՛ր աստիճան կրնայ մակարեւրել, կամ թէ երբէք կրնայ մակարեւրել. սակայն անհանդուրժելի աստիճանաւ կը զգամ թէ հոգիս արտակարգօրէն խռովեալ է... Այսօր Ապտուլահ եղբարց լուսանկարչատան մէջ գիտակցութեան սոսկալի զարթոնում մը և անլուր զգայութիւն մ'ունեցայ. երբ առաջին նստին արդեան կը ստատէի միանգամայն անտարբեր և անհամբեր, նիստէն ինձ թուեցաւ թէ դա՛ր մը յետոյ՝ նկարիչն եկաւ յայտարարել թէ պատկերն յաջողած էր, այլ... Բացաւրուք ինձ չունէր: «Ուրեմն արդէն մեռած էի» եւ մեռած ըլլալու գիտակցութիւնն ունեցող կենդանի մարդու մը զգայութիւնն ունեցայ, հոգեբանական տարեգրութեանց մէջ աննախընթաց զգայութիւն մը՝ եթէ չեմ յուշավրիպիր:

Հոգւոյս այս նկարագրած կամ աննկարագրելի վիճակն ինձ չպիտի ներէ գրել կրթական յօդուածոյս շարունակութիւնն ու խոստացած գրական յօդուածներս: Ուղեղիս մէջ ահագին շոքմարան մը գաղափարաց ու լեզուին անբաւ գանձարանն առջեւս բաց, այլ կամաց անասելի պարտասութիւն մը ու գրչի անյաղթելի դժկամութիւն մը միւս կողման: Այն, ճարտասանութիւն չէ ըրածս. կեղեքիչ, սպանիչ իրականութիւնն է զոր կը հաստատեմ՝ գրելիք սահման ձեռքով մը, զոր աստիճանէ վեր տեսք մը կ'այրէ: Գլուս յանձնառում մը՝ զոր գրով իսկ ըրի Ձեզ, մարդասիրական անսպառ խմոր մը՝ զոր բարի հօրմէս և անձնուրաց մօրմէս կը ժառանգեմ, անսուղ ժողովրդեան մ'ազադակն՝ որ «հաց» կը խնդրէ, հաց մտաւոր — այս ամենն, աւա՛ղ, ահա անգոր կը լինին կամքիս դէմ, և կամ անկարող կը լինին վերադարձնելու կամացս՝ իր նախկին զօրութիւնն: Այլ ևս կատարելագոյն անձնատուր հոսանքին՝ որ հիմայ արշաւակի կը տանի զիս ի մահ, երբ երբեմն կը հարցնեմ սակայն դեռ՝ թէ այդ հոսանքն ուստի՞ ծագումն առաւ, ի՞նչպէս գոյացաւ և մինչև ինձ ի՞նչպէս հասաւ, թէ ինձ հետ ուրիշներ ալ չը մղեր միթէ. կը հարցնեմ դեռ, քանզի միտքս միշտ կը նախազգայ նոր նոր պատասխաններ, նորանոր յայտնութիւններ, Գնոյ հանգստեան անհանգստի պէտքն այս գիշեր ինձ թոյլ չը պիտի տայ՝ Ձեզ աստանոր մի առ մի թուել:

մտքին հետագոյնութեանցն արդիւնքն, ներքին Սիւնիքսին ստացած լոյրը պատահականներն իր ահաւոր հարցարանին: Այժմ պիտի միայն ըսեմ Ձեզ, և զՁեզ պիտի երգուընցնեմ որ հրապարակաւ ըսէք թէ՛ հոգւոյս վրայ մտքեցուցիչ սուրբի մը ներգործութիւնն ըրած է... Օտեան: Օտեան, այո՛: մահառուակ մահառիթ հոսանքն իրմէ բղխեցաւ, հայ մտքին քայքայումն իրմէն սկսաւ, իրմով. դարուս է՛ն բարի հայ մարդն անշուշտ, որ ակամայ գործեց առ Հայս ամենամեծ չարիքն, իր կամաց անհուած զօրութեան հակառակ՝ սերմն ընկալելով դարուս հիւանդութիւնն իր Ասիոյն հայու առողջ հոգւոյն մէջ, Իւր որոնող անբացատրելի նայուածքն՝ իմ պատանեկութեանս լուսեղէն սիւնն եղաւ. իմաստասիրութեան արհամարհող իր գրուածք՝ իմաստասիրական Աւետարանս եղան: Դրանք իմաստասիրութեան գրքերն՝ որոնցմով միտքըս կը սնուցանէի՝ կիւնային ձեռքէս յաճախ, դառն ժպիտի մը ներքեւ հալելով անհետանալով. ինքզինքս կը բաղդատէի գօղէդ ուտող թռչախառնորին՝ ոյր օրերն համրուած են: Դանի որ Օտեան, քանի որ աշխարհական խորհրդագրածութիւնը՝ զոր այդ եզակի տղայինն առ մեզ անձնաւորեց, քանի որ անիկայ հոգւոյս կը տիրէր, քանի որ բարոյական գոյութեանս էական տարերք սպառած էին, դրական իմաստասիրաց ընթերցումն առ ի՞նչ պիտի ծառայէր:

Հիմայ ա՛լ բնաւ յոյս մի զնէք իմ վրաս, Տէր Խմբագրապետ: Յօդուածի տեղ Ձեր թերթին, այս անգամ հարուած կուտամ Ձեր սրտին: Ծակատագրուած էր այդ. ուստի պիտի ներէք ինձ: Մարտնչեցէք լաւ մարտն: Ուշ իսկ մնացիք ջնջելու համար բարոյական հիւանդութեան մահաբեր սերմերը, զորս ցանեցին Օտեան

Եւ իր սանն և իր դոճն  
Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

24 մայիս 93

Այս նամակը ծնունդ տուաւ անդուլ պայքարի մ'ընդմէջ եղիւ Էֆէնտիլի և լրագրոյս խմբագրապետին, որ քաջ ճանչելով մեծ գրագիտին այս յուսահատ լքման վերջին պատճառները, ոգւով չափ աշխատեցաւ անոնց ազդեցութեան անարժէքութիւնը մատնանիլ ընելու, մաքառեցաւ լքիչ ու տնչարժութեան դատապարտող հայեցողութեան դէմ, ապացոյցներ յառաջ բերաւ հաստատելու՝ թէ կեանքն յաւիտենական վէճն է ընդդէմ մահուան և այդ վէճին մէջ դատաւիք ըլլալը ներքին չէ՛ իրեն որ օժտեալ է այնքան ազնիւ որոտով ու գովելի ձիրքերով. չը յուսահատեցաւ ամէն անգամ երբ անլուրի մնաց իւր ձայնն և վերջապէս անյողգուզ կամեցողութիւնն յաղթանակեց. եղիւ Էֆէնտիլի տեղի տուաւ, և ինքն իսկ յանձնառու եղաւ կուսակու հոգւոյ այն մեղաւորութիւնը յուսահատ ու մահահրաւէր վիճակին դէմ, որոյ դոճն եղած կը համարի ինքզինքը: Անուաղ ժողովրդեան աղաղակըն որ մտաւոր հաց կը խնդրէ իրմէ. այժմ աւելի կ'աղգէ իր սրտին՝ քան իր սիրելի և մենասէր անգործութիւնը, և ապացոյցը կ'ընծայուի մեզ այս օր իսկ, զի Ծաղիկի ներկայ թիւը կը պարունակէ Եղիւ Էֆէնտիլի բնարեւոյն յօդուածներէն մին:

Ժողովուրդը մտաւոր հաց կը խնդրէ, ու գիտէ թէ Տէմիրճիպաշեան անոր եղական եփողներէն է:

Ա. Ա. Ս.

Ա. Մ. Գարագաշեան առ Եւսեպէ

### Ազնիւ Օրիորդ,

Ընկալայ սիրով ձեր նուէրն, այսինքն օրինակ մի ձեր պատուական աշխատութենէն զոր ունիմ գրասեղանիս վրայ, և ընթերցայ դրեթէ ծայրէ ի ծայր, ոչ առանց զարմացման: Արդարեւ ծընունդ մտաց գեղեցիկ, հանճարեղ, փափուկ սրտի ազդումներէ բխեալ. լեզուն եւս քաղցր և վայելուչ, և արուեստ տաղաչափութեան ընտիր. միով բանիւ, զաշխատութիւն ձեր կը դանեմ աւելի քան որչափ մարթէի ակնկալել օրիորդէ ի ծաղիկ հասակի յու՛մ էք դուք: Զարմանալի են պարգեւք բնութեան զոր եկած է զարգացումներ կանուխ մշակութիւն մտաց և սրտի. Երանի էր ազգին, եթէ աղջկունք որ սահմանեալ են ի լինել մայր՝ լինէին նախանձաւոր ձեզ:

Կը ցուցնեմ ծանօթ հայ աղջկանց ձեր աշխատութիւնը, որպէս զի շարժեմ ի բարեւը նախանձ, կը փափաքէի դալ անձամբ յայտնել խնդակցութիւնս ձեր երջանիկ ծնողաց. առ այժմ՝ շատ համարեցէք տալ նոցա զողջոյն իմ:

Ձերդ

Ա. Մ. ԳԱՐԱՅԱՇԵԱՆ

26 մայիս 1893

Բերա, Զորեքշարթի:

### ՄԱՆԿԱՆՑ ԽՈՐՎԻՐԱՊՆԵՐԸ

Գ.

Վ.ՆԱՍՎԱՐՃԱՊԵՏԱՅ ԵՐԵՒԱՆ

Յօդուածիս այս երրորդ մասին վերնագիրը՝ վարժապետական դասէն դուրս գլուխուղ գործիչներուն ձեռուընթերցել պիտի տայ բերկրութենէ: «Վնաս վարժապետաց երեսն»։ Եւ, սանկ եօլի եկէք. խոստանեցէք որ վարժապետներուն երեսն շատ փնտս կրեց ու կը կրէ կոր մեր ժողովուրդը. ա՛ն վարժապետական ալային, ոտքով զլիտով ամեն ազգային գործի մէջ է. խօսք, խօսք, «ըստ որում», «բայց որովհետեւ», «ապա ուրեմն». խօսելէն դուրս չառնելով՝ բան մը չը կրնար ընել, ուրիշներուն ալ արդեւ կ'ըլլայ բան մը ընելու: «Անշուշտ խոհական և հետադարձ անձինք իրաւունք ունին երբեմն մեր վարժապետական դասուն վրայ բարձրէն նայելու. մենք երբոր չարս հատ գողցիւրէն գիրք կարդանք և երկու ալ ճառ խօսինք, ինքզինքնիս կարող կը զգանք բոլոր վարչական ու վարժապետական գործերը անօրինելու, բոլոր հարցերը լուծելու. անոնք՝ փորձառութեան դպրոցին մէջ սորված՝ մեր հնչուն պարբերութիւններով ընել չը կրցածն հնչուն գրամով կամ գործնական մաքով մը կը կատարեն երբեմն, կը կատարեն շատ անգամ: Եւ ա՛լ բերանին կը բացուի վարժապետական ալային վրայ: Վարժապետներուն ամենէն ազդու պատասխանն այդ գործնամիտ մարդոց՝ անոնց հետեւելին պիտի ըլլայ: Եւրոպական հեղինակաց խորհուրդ հարցնենք, սակայն

մեր երկրին, այդ երկրին մէջ ապրող ժողովրդաց բարքն և անոր մէջ տիրող օրէնքները պէտք է սորվինք, մեր գործ ունենալիք մարդոց հետ պէտք է չիտինք, Եւ այն ժամանակ մեր կարգացած եւրոպական գրքերէն շատ աւելի օգուտ պիտի քաղենք:

Սակայն ես այս յօդուածոյս մէջ նպատակ չունիմ այդ կարգի վարժապետաց վրայ խօսելու, անոնցմէ ոմանք խօսքի ու գիրի թշնամի գործիչներէն՝ գործնամութեան մասին ալ վար չեն մտար: Հոս վարժապետաց երեսն դպրատան տղայոց կրած փնտսները պիտի թուեմ. Այդ փնտսները տեսակ տեսակ են: Բնական դատաստութեամբ մը՝ նիւթական փնտսներէն պիտի սկսինք, մտաւորականներէն պիտի անցնինք ու բարոյական փնտսներուն պիտի հասնինք:

Նիւթական վնաս. — Տղան գլուխը կախեր կ'աշխատի: Խեղք միտքը վիտաստեութիւններուն վրայ է. բայց ի՞նչ օգուտ, քննութիւնները մօտեցան, պատուոյ խնդրը կայ. պէտք է դասերը աչքէ անցունել, պէտք է դասագիրք կարդալ: Տղան գլուխը կախեր կ'աշխատի: Արիւնը սիրտն ու գլուխը ամբողջութեամբ է. դասարանը փոքր, պատուհաններէն շատ օդ չը բանիր՝ եթէ պատուհանները բանալու խեղք ըրած են կամ դանդաղած չեն: Եւ ահա դասագիրքը... կը պատկերազարդուի. ի՞նչ աղուոր կարմիր բոլորակ է. մէյ մ'ալ, մէյ մ'ալ: «Միւսի՛ւ Տիրանին քիթէն արուն կուգայ կոր.» — «Պապանձէ՛. դասդ սորվէ դուն.» — «Դիթէս արուն կուգայ կոր, Միւսիւ.» — «Ի՞նչ ընեմ, ես բժիշկ եմ. հիմայ ժամանակը դտաւ քիթէդ արուն գալու.» — «Երթա՛յ պաղ ջուր զարնէ, Միւսի՛ւ, աղէկ է.» — «Ինծի բա՛ն սորվեցնելու ելար պարո՛ն, գլուխդ կախէ աշխատէ՛, անպիտան.» — «Միւսի՛ւ, իմ քիթս ալ արունի՛ նէ.» — «Էօլիւշին քէօւը.» — «Շատժաւ, Միւսի՛ւ, երթամ մուսուլխին բռնեմ. չուտ մը կուգամ.» — «Բոլոր ատոնք դաս չի սորվելու պատուականներ են. գնա՛՛ սէ մուսուլխին տակը մնացիր՝ կ'ուզես նէ.» Աշակերտին քիթէն արուն գալուն պատճառը՝ դպրոցին յայտադրէն յետոյ՝ դպրոցին դասատուն է, որ դասագիրքով սորվեցնելով ու դասը գէշ հասկցնելով ու դաս քիչ անգամ հարցնելով, աղուն արիւնն երակներուն մէջ պտըտեցնելու տեղ՝ դասարանին տախտակամանին վրայ պտտեցնելու պատճառ կ'ըլլայ: Եւ չարեաց խելոյն դարմանուելուն ալ արդեւ կ'ըլլայ, մինչ արեան առաջին կաթիլին ի տես՝ ի՞նք պարտէր ստիպել աշակերտն որ դուրս ելնէ և արիւնը կեցնել փութայ: — Դասատուն տղայոց նիւթագէտ կը փնտս նա, երբ իրենց արտաբերութիւնը չ'ուղղեր. դաս մը գէշ արտաբերութեամբ ձայնի գործարանը կը յօգնեցնէ, և արտաբերողին հետ ունկնդրաց ալ յօգնութիւն կամ ձանձրութիւն կը պատճառէ: Լպտե՛լ, ծաւմմել, բերնէն քալիլ՝ հաւատարմագէտ յօգնեցուցիչ են խօսողին ու լսողին համար: Գործարանն յօգնելէ աւելի կը մարդու լաւ առողջանութեամբ, որպէս և միտքն այնքան աւելի կը մարդուի՝ որքան լաւ խօսի կամ լաւ գրէ մարդս: Իշէլէն սէմիր փառլաւ. Ձայնին՝ որպէս մտաց՝ փայլն իրենց բարեւոք գործածութեան պայմանաւ է: — Դասատուն դարձեալ նիւթական կամ մարմնական փնտս կը պատճառէ դասատուաց, երբ դրա-

տախտակին վրայ մանր և անընթեռնի տա-  
ռերով կը գրէ թիւ կամ գիր. աղայոց տե-  
սութիւնը, մանաւանդ յետագայն նստարա-  
նաց վրայ եղողներունը, կը յոգնի կը տկա-  
րանայ. ումանք անհարստին բաժանորդ կը  
գրուին. այցադին, դեղ, ակնոց, երթեւեկի  
ծախք, բժշկատան մէջ սպասելով կորսուած  
ժամանակ, և մանաւանդ աչաց զօրութիւնն՝  
որ անդարձօրէն կը կորսուի, — վարժապե-  
տին մանր կամ գէշ գիրը տեսէք երբեմն  
վարժանակին (ներելի է՝ գէթ մայիսին մէջ՝  
վարժարանաց մեր տղայքը թռչնոց համե-  
մատել) քանի՜ կը նստի: Եւ հաւատացէ՛ք որ  
եղած չարեաց համար ոչ ոք ինքզինքը պա-  
տասխանատու կը նկատէ, և վարժապետն  
ամենէն պակաս. ընդհակառակն, ծնողացմէ  
ոմանց՝ իրենց զաւակն աւելի սիրելի կըլլայ  
ակնոց դրած օրէն. աշխատասիրութեան  
նշանակն ու վարձքը չէ՞ ոսկի ակնոցը. ակ-  
նոցը, զոր մեր տղայութեան ժամանակ ծե-  
րերը միայն կը դնէին՝ ամէնալավ. վեշտա-  
տանամեայ պատանեաց ակնոցին ի տես՝  
Մատամ Ռօլանի նշանաւոր աղագոյնին նը-  
ման բացառաւորութիւն մը յանգագոյս կը  
թուչի բերնէս. ո՛վ կրթութիւն, — կը գո-  
չեմ, — անունովը կամ չնորհիւք ի՛նչ անմը-  
տութիւններ, ի՛նչ ոճիրներ կը գործուին:

Իմացական վնաս. — Նիւթական փնաս-  
ներուն ամենքն ալ չը թուեցի. մանկավար-  
ժութեան դասընթացք մ'ընելու միտք չու-  
նիմ թերթիս մէջ: Ուսուցչաց երեսնէ մա-  
տաղ խմացականութեանց կրած փնասնե-  
րուն ալ գլխաւորներն յիշատակենք: Ամեն  
բանէ առաջ դասատուն կարգալ կամ ար-  
տասանէլ չգիտէ (բացառութեանց միշտ  
յարգանք): Մեր այս անկարողութեան հաս-  
տատութիւնն զմեզ չը պարտի վիրաւորել:  
Լըկուվէ կը խոստովանի թէ՛ դիպուածով,  
գրականութեան մէջ անուն հանելէ շատ  
վերջը, դիպուածով օր մը նմարեր է՝ բարձ-  
րաձայն ընթերցման մը պահուն՝ թէ՛ կար-  
գալ չը գիտէ, կարգալն ալ արուեստ կամ  
գիտութիւն է եղե՛ր, այո՛. և... գրգըմսան  
սօցնա մեծանուն Լըկուվէն կարգալու ար-  
ուեստ կը սորվի ու կը սորվըցնէ Սօնպօնի  
մէջ: Միտքը՝ աչքին նման՝ բաւերը կը տեսնէ  
արտաբերութեան պահուն. և՛ աչքին նման՝  
միտքն ալ հաճոյ կամ անհաճոյ տպաւորու-  
թիւն մը կ'ունենայ իրեն ներկայացուած  
բաներուն վայելչութեան կամ անվայելչու-  
թեան համեմատ: Հանդիմն ու ռանգաւորու-  
թեան՝ Հոգեբանութեան — ուստի և դաս-  
տիարակութեան գիտութեան — մէջ ստա-  
ցած կարեւորութիւնն անբաղդատելի է. նոր  
Հոգեբանութեան այդ յայտնութեամբը՝  
Մանկավարժութիւնն ի հիմանէ փոխուեցաւ.  
հաճոյքին ու չափազորութեան ամեն բան  
կը ստորադասի. հաճոյքն ու չափազորու-  
թեանն ամեն բան կը սպասուի: Զգայարա-  
նաց հանոյ՛ ազգելու համար, պէսպիսակ ա-  
ռարկայք՝ միօրինակ գրքերուն փոխանակե-  
ցին. պատերուն մերկութիւնն աշխարհա-  
քարտէսներով ու կենդանեաց ու բուսոց  
բնապատմական պատկերներով ու կենդա-  
նագիրներով ու գիւղանկարներով ծածկուե-  
ցաւ (հոգ չէ՛ որ անոնց մէջտեղ ցցուած  
մարդկային կմախքին սոսկատեսիլ պատկերն  
այդ ամեն գեղեցիկ բաներուն տպաւորու-  
թիւնը կուգայ ջնջել... ոսկորի հարուա-  
ծով մը): Մանկանց միտքը ռանգաւորու-  
սուցուած նիւթերն, ի մի բաւ կրթութիւնն

արգասաւոր ընելու անհրաժեշտ պայմանը  
նկատուեցաւ: Նախնիք՝ մեր բայի կատար-  
եալներուն եզակի երրորդ պէմքը ցաւով խո-  
նարհեր են, նախազգալով գոգցես թէ՛ մեր  
դրացի ժողովրդոց մէջ կատարուած բարի  
բաներուն վրայ պիտի խօսինք առանց զա-  
նոնք կարենալ, առ մեզ ալ գործադրելու:  
Մեր ուսուցչաց մէջն քանի՞ հոգի մտքն  
կ'անցնի որ ուսանողներն իր դասերուն շա-  
հադրգուէ, դասը կենդանի կացուցանէ, և-  
լեւէջաւոր դաշնակաւոր արտասանութեամբ  
մը նիւթին ցամաքութիւնն սքողէ, կամ՝  
ինքնին եթէ չահեկան է նիւթն՝ անոր բոլոր  
չահեկանութիւնն ի յայտ բերէ լաւ կետադ-  
րելով պարբերութիւնները, պարբերու-  
թեանց արժէքաւորը մտուած ձայնով մ'ար-  
տաբերելով, ձայնարկութեան ընկերացնե-  
լով չեղուն ու շարժուծեւը, բարձրացնելով  
ու ցածցնելով ձայնն — որպէս հովիւ ու ծո-  
վը՝ մեծ այն արուեստագէտները՝ կ'ընեն  
իրենց ալիքներն ու մանչիւնները. մէկ բա-  
ռով՝ նմանելով բնութեան, որ իր դրից և իր  
ձայնից մէջ հանապաղ կ'այլազանի, յաւէտ  
կը կերպարանափոխի, վաւժաւն ուրուսման,  
աւտօմի վարդէն ամպոց ահաւոր բարդու-  
թեան կ'անցնի յաւիտեան, իր անեղծ անայ-  
լայլ միութեան մէջ միշտ փոփոխական ու  
դիւթական: Մեր դասատուներն ալ, նմանո-  
ղութեամբ... հեռագրական ցիցերուն, բե-  
մին վրայ կը տնկուին — կամ մերթ գրեթէ կը  
պաւկին, և այն դրից մէջ երբեմն ամբողջ  
ժամ մը կը մնան: Տղայք կենդանի օրինա-  
կէն պիտի տնկարուին. անոնք ալ դասա-  
րանին մէջ կամ ընկերութեան մը մէջ փա-  
տի պէս կը կենան, կամ եայլովիւ կ'ըլլան՝  
փորբերին կշտացուցած կատուններուն նման:  
Դասատունն ձայնն՝ երբ դաս կը խօսի՝ ան-  
փոփոխ է — սկզբունք մը պէս կամ մարմ-  
նոյն դիրքին պէս. ոչ գլուխը կը շարժի ոչ  
թեւը. շարժում շարժուծեւ չը կայ, որ ը-  
սել է՝ կենդանութիւն չը կայ այդ ձայնին  
և այդ կեցուածքին մէջ. — որ ըսել է մե-  
սելութիւն կայ դասարանին մէջ: Է՛հ, կար-  
ծէ՛ք թէ՛ այս եղանակաւ դասախօսութիւն  
մը դո՛յզն փնաս կ'ընէ մատաղ մտաց: Տը-  
ղուն միտքն հաճոյք կը գգայ և մեծապէս  
կ'օգտուի, կը շահագրգռուի՝ դասին, տղան  
երբ կը գգայ թէ՛ դասատուն սիրահարած  
չէ իր դասախօսութեան նիւթին, անով  
գրաւուած, անով գերուած, անով ոգեւոր-  
ուած չէ: Տղուն մէկը փողոցի ձայներուն,  
փողոցի խօսակցութիւններուն մոտիկ կ'ընէ  
յանգգայս (քանզի շրտ փողոցի մէջ տեղ են  
մեր դպրոցներն ընդհանրապէս). միւսը՝  
լրագիր կը կարգայ գաղտնի կամ յայտնի.  
ուրիշ մը քովինն հետ կը խօսակցի. ուրիշ  
մըն ալ կուլայ (մեւեր է կամ անձնասպան  
եղեր է... կարգացած վէպին դիւցազնը կամ  
գիւցազնուհին). քանի մը տղայք հազիւ մոտիկ  
կ'ընեն կամ կը գրեն դասը կէս քուն կէս  
արթուն: Աղջիկ մը կը սիրենք, կը պաշտենք  
զայն, իրեն համար կը մեռնինք, արդ, ինչպէս  
որ մեր պաշտաման այդ գերազանց առար-  
կային հետ ժամու մը տեսութեան մէջ ինք-  
զինքնին կը գերազանցենք իբրեւ վարք, իբրեւ  
ուսմունք, իբրեւ անձնութիւն: Եւ, ախ,  
այնպէս պարտէինք ընել, այնպէս պարտէ-  
ինք ըլլալ այն ժամուն զոր դասարանին մէջ  
կ'անցնենք նոր սերնդեան առջեւ, որ փո-  
քըր է մանկութեան նման, որ մեծ է ա-  
պագային նման:

Բարոյական վնաս. — Դասատուն պէտք  
է օրինակելի վարք ու բարք ունենայ: Դըպ-  
րոցէն դուրս՝ եթէ ամուսնացած է՝ պարտի  
սիրել իր կինն և իր կինը միայն, ու սիրել  
ու լաւ դաստիարակել իր զաւակներն. ե-  
թէ իր կինը ծեծէ կամ իր տղայոց տէր չըլլայ,  
իր աշակերտը շատ չեն յարգեր զինքը. ե-  
թէ ամուսնի է, հանգիստը աղջկան հետ, նոյն  
խի իր աշակերտուհեաց հետ և մանաւանդ  
իր աշակերտուհեաց հետ սիրահարութիւն  
ընելու չէ. մենք՝ բանաստեղծ դասատու-  
ներս՝ զայս կը ներենք մենք մեզ, սակայն  
կրթական օրինակը — իր բացակայու-  
թեան՝ բնական օրէնքը — պատիժ կը սա-  
մանէ այդպիսի դասատուաց: Իսկ ամուսնի  
կամ կանամբի, պէտք չէ որ յաճախենք  
հասարակաց զբօսալսյոյր, պէտք չէ որ մեր  
զաւազանը խաղցնելով ու պատուհաններէն  
վեր նայելով՝ անցնինք փողոցներէն. պէտք  
չէ գինի խմենք կերակուրէն դուրս. պէտք  
չէ ծխենք՝ նոյն իսկ դասարանէն դուրս.  
մեր տոհմային, ընկերական և առեւտրական  
պարտքերն անստգիւտ ուղղութեամբ մը  
կատարելու ուշադիր ըլլալ պարտինք: Պար-  
տինք մենէ մեծ դասատուներն յարգել ու  
մենի պգտիկները քաջալերել եթէ գրող ենք,  
մեր գրածներն հանդիպողին կարգալու չը-  
տեսութիւնն ընելու չենք. նոյնպէս ամե-  
նէն մեծ անկրթութիւնն է հանդիպողին  
հարցնել. «Յօդուածս կարդացի՞ք. ի՛նչ պէս  
գտաք»: Գրողն իր գրածը մոռնալու է.  
Իսկ երբ ինքնաբեր գովեստ մը լսէ, պէտք  
չէ նոյն իսկ անոր պատասխանն երկար պար-  
բերութիւններով ընէ:

Դասարանին մէջ դասատուն ծանր կե-  
նալու է, բայց ոչ անշարժ: Պէտք է ըստ ա-  
մենայնի անստգիւտ խօսակցութիւն մ'ու-  
նենայ, խօսքերուն մէջ օտար բառեր խառ-  
նելէ զգուշանալով: Աշակերտաց հետ այն-  
պէս վարուելու է ինչպէս կը վարուի կեդ-  
րոնական վարժարանին աննման Տնօրէնն,  
եղբայրաբար՝ բայց միայն երբ աշակերտը  
կրթեալ են. իսկ երբ անկիրթ են, նոյն-  
պէս դասատուն կամ տնօրէնն այնպէս  
վարուելու է տղայոց հետ՝ ինչպէս որ կեդ-  
րոնական վարժարանին աննման Տնօրէնը,  
խստութեամբ մը՝ որուն տակ եղբոր մը  
սիրտը կը բարխէ: Պէտք է դասատուն  
սէր ունենայ իր սորվեցուցած ուսման, իր  
ուսուցած մանկունոյն, իր ծառայած հաս-  
տատութեան. պէտք է անձնուէր ըլլալ իր  
գործին որպէս է Պէրպլեան, որոյ անձ-  
նութիւնն երբ երբեմն անձնուրացու-  
թեան կը հասնի:

Եւ որպէս զի դասատուն սիրէ իր գոր-  
ծը, պէտք է նախ սիրէ աշխարհը. եւ ոչ  
վերթերը բանայ և հեծեծէ՛. «Աշխարհ ա-  
մենուրեք նոյն է, ամեն տեղ վիշտ ու վաս-  
տակ. վարձք ու վայելք. բայց այս ամենն  
ինձ համար ոչինչ է... Հայր, ներէ ինձ ե-  
թէ կարճեցի ճանապարհորդութիւնս...»

Ե. ՏԵՄԻՆՈՎՍԿԻԱՆ

ՅԱԿՈՒ ՊԱՐՈՆԵԱՆԻ լուսանկար պատկե-  
րը ի վաճառ հանուած է Զարդարեան դը-  
րատան կողմանէ: Գին 5 շրշ. փոքրը՝ 2 շրշ:

ԵՐԱՆՈՍ ԱՂԲԱՐ կամ ԹԱՊԼԱՔԵԱՐ ՎԱՐ-  
ՍԱՊԵՏԸ. կատակախաղ մէկ արարուած.  
գրեց Տիրան Գ. Փափագեան. Գ. տպագ-  
րութիւն: Գին 1 շրշ:

## ԼՆԱԹԵՐ ՓԱՎՈՐՆ

Ալիք ալիսաց կը բաղխին, շարժման մէջ է ծովն անսահման,  
 եւ կոհակներն մօտեման, հասնին մինչեւ ոսկերուս,  
 երգ մը կ'երգեն ինձ գողտրիկ, սուրբ բզգամամբ եւ կաթոգին.  
 « Եկո՛ւ, գոչէ ծովն ի հեռուս, եկո՛ւ ծոցիս մէջ հանգչիլ: »  
 եւ կը դիտեմ ըզմայլած իմ սիրահարն կապուսակ.  
 Հոգիս յուզման մէջ համակ՝ լրսեմ երգեր իւր սիրային:  
 « Եկո՛ւ, գոչէ ինձ վերսին, եկո՛ւ փարիլ ափունքիս. »  
 եւ մեղուքեան մէջ ապաւնձ՝ դիտեմ անբարբ աչօք ըզծով,  
 որ կը կոչէ գիս անվերջ խելացրնոր աղաղակաւ.  
 Մինչ կը յայտնեմ վեհակոծ՝ քէ իւր իսկ եւ սիրս ու հոգիս,  
 Սակայն, աւա՛ղ, ես իմ մարմնով փառեալ մընամ ցամաքին:  
 եւ ծովն ինձ պաղաւթի միտս սիրով վառեալ անյագուրդ՝  
 որ իւր ծոցին մէջ հանգչիմ կամ յասակին խորը ննջեմ.  
 եւ արտասուօք կը մերժեմ զնա, լեզի կարիլ մ'արտասուօք  
 Զոր կուսայ փոխ ինձ այն պահուն ծովն արտասուս ծիծաղկոս,  
 Թէպէտ գուցէ ծոցին մէջ մաղձ դառնահամ կը բուսնի միտս:  
 եւ այդ օրէն կը դիտեմ, եւ այդ օրէն կը ճառապիմ՝  
 Թէ ինչո՞ւ չեմ ծընած երբեք ծովու զուսկ հարազատ,  
 եւ մանկական արտասուս անոյշ, անվիտ ու անխորհուրդ  
 ձիւղ այն օրէն, ա՛հ, կը սկըսին լեզի խառնել իրենց մէջ.  
 Ծովուն ջրին կաթին պէս ջինջ մարգարեսայ կը քրչին քեզ,  
 Սակայն հազիւ հաւատարմ՝ կը գգաս քէ մէջն անբաւ քոյն կայ...:

## ՔԵՆ ՓԱՎՈՐՆ

Իմ անհուն ծովս, քսէ, ինչո՞ւ ա՛լ չես խօսիր դու ընդ իս,  
 ինչո՞ւ լուռ մունջ կառ շարժուած, եւ յոյզ եւ տենչ ա՛լ չես յայտնեմ,  
 ինչո՞ւ արդեօք վեհօք զեզուն՝ ա՛լ բընաւ չես դու գիս սիրեմ,  
 Ա՛լ չես յուզմամբ ժպտիր երբեք քո անձկակեզ սիրունւոյդ,  
 եւ անտարբեր մընաս անշարժ, երբ գիս տեսնես ափանցիկ մօտ.  
 Հոն շա՛տ հեռուն կը փրփրեիս, ա՛յնքան հեռու այս ափունքէն,  
 եւ չես ուզեր գիս պարաւել կար փրփրովդ անուշահամ,  
 եւ ոչ հոգիս որորել քաղցրանքաւ օրորեմով...:  
 Ծո՛ւ, մեք գիտար կը հասկընամք. դու իմ հոգին կ'ընթերցուս,  
 Ու ես գաղտնիք ա՛յնքան լաւ գիտեմ որ արդ ծով մ'է հոգիս.  
 Օ՛հ, հառաչէ փրփրացայտ եւ ըստիմէ գիս սակաւ...: —  
 եւ ի հեռուս առին գոռալ անդէն ալիքն արծաթի.  
 « Մեր ծոցին մէջ եկու քաղուիլ, ա՛նգ քեզ հանգիստ յաւիտեան: »

ԵԻՏԵՐՊԷ

## ԵՐԳՈՂՆԵՐ

Գարնային այս գեղեցիկ եղանակին  
 մէջ ուր բոլոր բնութիւնը կը վերածնի  
 ի կեանս, համակ բոյր եւ խնծիլ, որ-  
 չափ յաճախ տեսնուած է որ յոյն երի-  
 տասարդներ խմբակներ կազմած կը  
 թափառին հոս ու հոն, միշտ անուշ  
 երգ մ'ունենալով իրենց շրթանց վրայ,  
 առանց խտրել գնելու տեղոյ կամ ժա-  
 մանակի, այդուհի կամ գիշերը, փողոցի  
 կամ հրապարակի մէջ եւ կամ ծովուն  
 վրայ նաւակով մ'աստանդական:

Մանաւանդ Բերայի մէջ որչափ ան-  
 դամներ կը տրուի մեզ վայելել ժողովը-  
 դական երգերով այսպէս վայրկենապէս  
 կազմուած նուագահանդէսներ:

Փոքրիկ խումբ մ'է 7—8 երիտա-  
 սարդներէ կազմուած որ գիշերուան հան-  
 դարտութեան մէջ, մեր տան քովի հը-  
 րապարակը, կ'երգէ ժամերով, Գար-  
 նան ամէնէն գեղեցիկ գիշերներէն մին,  
 երկինք ամպերով ծածկուած որոց պա-

տառուածքներէն հաղիւ քանի մ'աստ-  
 զեր, ամէնէն յանդուգններէն, կը յաջողին  
 իրենց աղօտ լոյսը սարգեցնել. այդ կէս  
 լոյս ու կէս մութին մէջ ի՞նչ անուշ է  
 ունկնդրել ժողովրդեան երգերուն ջոր  
 քանի մը ձայներ կը գեղեցիկ իրենց  
 բոլոր սրտովն ու հոգեւով:

Եւ յանկարծ գաղափար մը կը զարթ-  
 նու յիս: Երբ այդ լոյսն երիտասարդ-  
 ներ այդքան սիրով, կարծես հոգեկան  
 պէտք մը գոհացնելու համար, կը հա-  
 ւաքուն երգելու, յաճախ կ'իքարով մը  
 ընկերացած, ի՞նչ կ'ընեն մեր երիտա-  
 սարդներն:

Արդեօք ա՛յնչափ չար ե՞նք որ երգ  
 չունինք: Թ. Թ. ԱՐԱՄԵԱՆ

ՏՐԴԱՏ ՎԱՐԴ. ՊԱԼԵԱՆ. ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ.  
 Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի եւ Երեւ-  
 անի տեղեաց. Հատոր Ա. Տետր Գ: — Գին  
 3 1/2 դրուշ: — Ամբողջ գործը պիտի բաղ-  
 կանայ երկու պատկերազարդ հատորներէ:  
 800 երեսով: Բաժանորդագիրն է Պոլսոյ հա-  
 մար 25, գաւառաց համար 30 դրուշ:

## ԿՏԱԿԻ, ՆՈՒԷՐԻ ԵՒ ՎԱԳՖԻ

ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԻՆՁ ԻՆՁ ՕՐ ԻՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ [1]

1. Իւրաքանչիւր ոք՝ երբ առողջ է մտքով,  
 կրնայ իր ստացուածքէն կտակ ընել թէ՛  
 բարեգործական նպատակի եւ թէ՛ որոնց որ  
 ուզէ:

2. ԿՏԱԿ՝ ինչպէս դատաւորի՝ նոյնպէս  
 Պատրիարքարանի կամ Առաջնորդարանաց  
 միջոցաւ եւս կրնայ տեղի ունենալ:

Առաջին պարագային մէջ՝ Կտակարարը  
 դատաւորին ներկայանալով բերանացի կը  
 յայտնէ իր կտակն եւ ըստ այնմ հետեւեալ  
 շէնքի կը ստանայ. իսկ երկրորդ պարա-  
 գային մէջ՝ վկայից առջեւ Կտակագիր մը  
 պատրաստելով՝ անոր մէջ կ'ամփոփէ իր կը-  
 տակն եւ զայն ստորագրելէ եւ կնքելէ յե-  
 տոյ, վաւերացնել կուտայ Պատրիարքին՝ ե-  
 թէ ի Կ. Պոլիս է, եւ Առաջնորդին՝ եթէ ի  
 գաւառս է. այս կերպով պատրաստուած  
 կտակագիրն ընդունելի է եւ վաւերական՝ եւ  
 յետ մահուան Կտակարարին գործադրելի:

3. Կտակեալ զոյքն ըստ օրինի պէտք է  
 որ Կտակարարին շարժական ստացուածոց եւ  
 սրբի միւլի պէս անշարժ կալուածոց մէկ  
 երրորդ մասէն աւելի չըլլայ. եթէ աւելի  
 ըլլայ, այդ աւելորդ մասին վերաբերող կը-  
 տակն ընդունելի ըլլալու համար՝ Կտակա-  
 րարին մահուանէն ետքը ժառանգորդաց  
 հաւանութիւնը պէտք է. եթէ ժառան-  
 գորդք չհաւանին, մէկ երրորդէն աւելի մա-  
 սին համար եղած կտակը չկրնար վաւերա-  
 կան համարուիլ:

4. Այն կալուածներն, որք էմլաք մէկ-  
 գունք եւ արագիի միւլի կոչուած տեսա-  
 կէն են, չեն կրնար կտակուիլ:

5. Կտակարարը կը պարտաւորի Կտակա-  
 րար մըն ալ կարգել, որու պաշտօնն է  
 գործադրել Կտակին տրամադրութիւնները:

6. Կտակարարը կրնայ իւր ուզած անձը  
 կտակակտար կարգել, սակայն Կտակին  
 անթերի եւ լիովին գործադրութիւնն եւ  
 յարատեւութիւնն ապահովելու համար՝ լա-  
 ւագոյն է կտակակտարի պաշտօնը վերա-  
 պահել Պատրիարքին՝ եթէ Կտակարարն ի Կ.  
 Պոլիս է, եւ Առաջնորդին՝ եթէ ի գաւառս  
 է, եւ անոնց յաջորդաց:

7. Եթէ Կտակագիրն կամ հետեւի մէջ  
 ըսուի թէ « այսքան գումար կտակեցի կամ  
 վագրի ըրի այս ինչ եկեղեցւոյն կամ դըպ-  
 րոցին կամ վանքին եւ կամ Հիւանդանոցին »,   
 կտակն ընդունելի չըլլար, այլ պէտք է ը-  
 սել « այսքան գումար կտակեցի կամ վա-  
 գըք ըրի այս ինչ եկեղեցւոյն կամ դըպրո-  
 ցին կամ վանքին եւ կամ Հիւանդանոցին նա-  
 խաց կամ ալիս ուսանողաց կամ հիւան-  
 դաց պէտքերն եւ կարօտութիւններն հոգա-  
 յալու համար »:

8. Եթէ մէկն ուզէ իւր ստացուածոց  
 մէկ երրորդէն աւելին կամ կէսն եւ կամ  
 ամբողջն յատկացնել բարեգործական հաս-  
 տատութեան մը, այն պարագային մէջ հարկ

(1) Վագրի գրութեամբ կտակ ընելու ե-  
 դանակին օրինական տրամադրութեանց  
 մասին՝ Կտակաց Հոգարարութիւնը պատ-  
 րաստած է սոյն Հրահանգն, որ եւ վաւե-  
 րացուած է Ազգ. Կեդր. վարուչութեանէն:  
 Կը հրատարակեմք զայն իւր կարեւորու-  
 թեան պատճառաւ: Ծ. ԽՄԲ.

կ'ըլլայ կամ'նուէրի և կամ' վագֆի եղանակաւ ընել, ըստ հետեւեալ յօդուածոց:

9. Եթէ նմիէրի եղանակաւ ընել կ'ուզուի, պէտք է որ նուիրատուն ինք ձեռքով յանձնէ նուիրեալ իրը և կամ գումարը նուիրաւու հաստատութեան վերատեսչին, ըստ որում նուիրատուութիւնը լրացած կ'ըլլայ նուիրատուին յանձնելովը եւ նուիրաւուին ստանալովը:

10. Անոնք որ կը փոփաքին իրենց ըստացուածոց մէկ մասը կամ ամբողջն յատկացնել բարեգործական հաստատութեան մը, բայց չեն ուզեր ի կենդանութեան ձեռքէ հանել իրենց ստացուածքն, այնպիսեաց համար յարմարագոյն և ազահովագոյն միջոցն է վագֆի գրութիւնը:

11. Ամեն ոք կրնայ թէ՛ միւլ ստացուածքը, թէ՛ դրամն և թէ՛ գործածութեամբ չսպառող շարժական գոյքն, որպիսի են գրեանք, ՎԱԳԻՖ ընել հետեւեալ կերպով:

Ա. — Կրնայ իր վագֆին միւլթէվէլիութիւնն իր անձին վերապահել՝ ցորչափ կենդանի է, և յետ մահուան թողուլ իր նշանակած անձերուն:

Բ. — Կրնայ իր վագֆին հասոյթը նոյն իսկ իր անձնական պիտոյից յատկացնել ցորչափ ապրի, և յետ մահուան թողուլ բարեգործական հաստատութեան մը:

Գ. — Կրնայ իր վագֆին հասոյթէն բաժին սահմանել իր զաւակաց, թոռանց, ազգականաց և օտարոց:

Դ. — Կրնայ իր վագֆին դրամագլուխն անցնելու համար պայման դնել որ հաստութիւնը օրոշեալ մէկ մասը դրամագլխուն վրայ բարդուի:

Ե. — Կրնայ վագֆը հաստատած պահուն պայման դնելով իրեն վերապահել վագֆին պայմանները փոփոխելու, այս կամ այն հաստատութեան սահմանուած բաժիններն աւելցնելու կամ պակսեցնելու իրաւունքը: Վորօրինակ, եթէ վագֆի մը հասոյթին կէսն եկեղեցւոյ մը և միւս կէսը դպրոցի մը յատկացուած եւ ըստ այնմ հէօնէքը շէրիյէ առնուած ալ ըլլայ, վագֆին միւլթէվէլիին կրնայ եկեղեցւոյ բաժինն աւելցնել՝ զեղջելով դպրոցի բաժինն: Նոյնպէս եթէ վագֆին ամբողջ հասոյթը մէկ նպատակի միայն սահմանուած ըլլայ, կրնայ ուրիշ մէկ կամ զանազան հաստատութեանց սահմանել: Հետեւաբար, եթէ հիւանդանոցի համար վագֆի մը հաստատուած ըլլայ, և պարագայից բերմամբ այդ հաստատութիւն կարօտութիւն չունենայ, այն ատեն կրնայ վագֆի հասոյթն՝ աւելի կարօտ եւ յարմար ուրիշ բարեգործական հաստատութեան մը սահմանել:

Զ. — Կրնայ վագֆի ընողն վագֆին պայմանները փոփոխելու իրաւունքն իրեն յաջորդող միւլթէվէլիներուն ալ վերապահել կամ ոչ:

12. Վագֆը մշտնջենաւորութեան սահմանուած ըլլալուն պատճառաւ, անոր յատկացած բուն ինչքը ո՛ր և է կերպով չկըրնար զեղջելուլ ծախուել և չքացուել, այլ պայմանները միայն կրնան փոփոխուիլ՝ երբ պարագայից բերմամբ կամ բարեգործական հաստատութեանց պահանջմամբ կամ փոփոխմամբ այդպիսի հարկ մը յառաջ գայ:

13. Ինչպէս կը հասկցուի այս բացատրութիւններէն, մէկը իր ստացուածքէն ո-

րոշեալ գումար մը բարեգործական հաստատութեան մը վագֆի ըրած ատեն, եթէ նոյն վագֆի միւլթէվէլիութիւնը՝ նոյնպէս եւ պայմանները փոփոխելու իրաւունքն ի կենդանութեան իր անձին վերապահէ և հասոյթն ալ իր անձնական պիտոյից սահմանէ, վագֆի եղած գումարն՝ ի կենդանութեան՝ իր ձեռքէն չ'առնուիր, այլ կը մնայ իր մատակարարութեան ներքեւ և յետ մահուան կը գանձուի իր թողած գոյքերէն և կը յանձնուի յաջորդ միւլթէվէլիին, որ նոյնպէս պարտաւոր է վագֆին պայմանները նոյնութեամբ դործագրել:

14. Դրամ վագֆ ընելու պարագային մէջ հետեւեալ եղանակը պէտք է տեղի ունենայ:

Վագֆի մը վաւերական և օրինաւոր ըլլալու համար՝ վագֆ ընողը նախ առժամանակեայ միւլթէվէլի-գայմագամ մը կը կարգէ՝ զով որ ուզէ, և անոր հետ ներկայանալով դատաւորին՝ կը յայտարարէ ըրած վագֆը, գումարին քանակութիւնը, միւլթէվէլիութիւնը որո՞ւ վերապահած ըլլալը, և վագֆի եղած գումարը նոյն միւլթէվէլի-գայմագամին արդէն յանձնած ըլլալը: Միւս կողմէ միւլթէվէլի-գայմագամն ալ կը հաստատէ թէ վագֆի եղած գումարն ինք ստացած է: Այս գործողութենէ յետոյ՝ վագֆի ընողն դարձեալ դատաւորին առջև նախանշելով ըրած վագֆին՝ կ'ուզէ ջնջել զայն և յետոյ կը պահանջէ իր դրամն, իսկ միւլթէվէլի-գայմագամն չհաւանիր՝ պնդելով վագֆի եղած ըլլալն: Այն ատեն երկուստեք դատաւորի վճռոյն կը դիմեն: Դատաւորն հետեւելով Շէրիյի արամագրութեանց՝ կը կը վճռէ վագֆին օրինաւորութիւնն և վաւերականութիւնը: Դատաւորին այս վճիռը կ'արձանագրուի դատարանին մէջ և կը տըրուի հէօնէքը շէրիյէ որ վագֆիյէ ալ կ'ըսուի և այս կերպով վագֆն հաստատուն և անջնջելի կ'ըլլայ:

Վագֆն ըստ այսմ հաստատութիւն ըստանալէ յետոյ, եթէ վագֆ ընող անձն վագֆին միւլթէվէլիութիւնն իրեն վերապահած է, միւլթէվէլի-գայմագամին ձեռքէն կը ստանայ վագֆի եղած գումարը, և այսպէս կ'արձանագրուի դատարանին մէջ եւ անմիջապէս կը դադրի միւլթէվէլի-գայմագամին պաշտօնը:

Այս կերպով ձեռք բերուած և ֆիթվախանէն ալ վաւերացած հէօնէքին արամագրութիւնն օրինաւոր ըլլալով՝ ո՛ր և է պատճառաւ չկրնար ջնջուիլ և եթէ երբեք վագֆ ընողին ժառանգորդաց կողմէ վագֆին նկատմամբ ո՛ր և է զիտողութիւն տեղի ունենայ և դատ բացուի, անլսելի կը մնայ ամէն դատարանի առջեւ:

15. Եւլալը մէվգուֆէ և աւագիի Էմիրիյէ կոչուած կալուածներն՝ ինչպէս չեն կրնար կտակուիլ՝ նոյնպէս և չեն կրնար վագֆ ըլլալ: Միայն սրբ միւլթ ըսուած կալուածներն են, որ կրնան թէ՛ կտակուիլ և թէ՛ վագֆ ըլլալ:

16. Եթէ մէկը ուզէ սրբ միւլթ կալուած մը վագֆ ընել, նոյնպէս կը ներկայանայ դատաւորին և յայտնելով իր կամքն ու պայմաններն, հէօնէքը շէրիյէ կը ստանայ:

17. Սրբ միւլթ վագֆ ընող անձն եթէ ուզէ ի կենդանութեան իրեն վերապահել նոյն կալուածին հասոյթը, պէտք է որ դա-

տաւորին ներկայանալով ըսէ. «Այս ինչ սրբ կալուածս այս ինչ բարեգործական հաստատութեան միւլթէվէլիին ծախեցի»: Նոյն հաստատութեան միւլթէվէլիին ալ՝ կամ ի հարկին փոխանորդը՝ կ'ըսէ. «Այս ինչ սրբ կալուածն որ այս ինչ բարեգործական հաստատութեան վագֆի դրամովն գնեցի՝ ի հաշիւ հաստատութեան վագֆին, փոխադէնը վճարելու պարտաւոր եմ»: Այն ատեն նոյն վագֆի միւլթէվէլիին կամ փոխանորդը նոյն կալուածն, որ այլ եւս սրբ միւլթ չէ այլ վագֆ, կը ծախէ վագֆ ընողին՝ ինաւէթէյնի եղանակաւ, և այս կերպով ունեցած պահանջը պարտուցը հետ կը հաշուակցի և քէմէսիւլ հուսայ գնողին, որ առաջ ծախուըն էր: Եթէ այս կերպով վագֆ ընողն վարձակալ կ'ըլլայ իր կալուածին, ուզած կերպով կը գործածէ զայն և երբ անգաւակ վախճանի՝ այն ատեն մահլիլ կը մնայ իր վագֆին, ինչպէս որ ազգային ուրիշ հաստատութեանց (եկեղեցի, դպրոց, հիւանդանոց) և երուսաղէմի միւսթէսիա վագֆներու մասին ուրիշ օրինակ գործողութիւն տեղի կ'ունենայ:

18. Վագֆ ընողն թէ և կրնայ իր վագֆ-ֆին միւլթէվէլի կարգել զով որ ուզէ, սակայն վագֆը վտանգէ զերծ պահելու և անոր անխափան շարունակութիւնն ապահովելու համար, լաւագոյն է որ վագֆ ընողն իր մահուանէն ետքը ժամանակին Պատրիարքը միւլթէվէլի կարգէ եթէ ինք ի կ. Պոլիս է, և Առաջնորդն՝ եթէ ի գաւառն է և անոնց յաջորդներն, վասն զի Պատրիարք և Առաջնորդք գործակից ունին իրենց Ազգային Ժողովներ, Տնտեսական Խորհուրդ եւ Կտակաց Հոգաբարձութիւն: Պատրիարքը մանաւանդ այդ պաշտօնական մարմնոց հետ միասին հսկող է և պաշտպան ազգային այնքան հաստատութեանց վագֆներուն և կտակներուն, և Պատրիարքարանն ունի այս մասին կանոնաւոր արձանագրութիւն, օրինաւոր տումարներ և ընտրեալ կանոններ, հետեւաբար այսպիսի վերատեսչութեան մը ներքեւ տեղի ունեցած մատակարարութիւն մը չկրնար բաղդատուիլ մէկ կամ երկու մասնաւոր անձանց միջոցաւ կատարուած մատակարարութեան հետ:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՍԵՐԱՍԻՍԻԱ, 2 Մայիս 1893. — Սերաստիա տարիներ առաջ իւր նախակրթարանական ընթացքով, գաւառներու նախանձն և Պոլսոյ ունէր էր գրաւած: Իւր այդ գովելի ընթացք մեզ կարող դասախօսներ ընծայած է որոց մի քանին այժմ գերեզմանին յաւիտենական լուսութեան մէջ խաղաղ քուն մը կը վայելեն...

Սակայն կրթական խնդիրը 8-9 տարիներէ ատի մի այլ ձեւակերպութիւն կ'առնու: Ազգային վարժարանք, իրենց ճակատին վրայ «Յետադիմութեան դպրոց» Մակդիրն առած, աշակերտաց համար մի հաճոյատեղի դարձած էին: ամենուրեք նախանձ, վարժապետական կռիւ: Միայն կառավարիչ մը և ոչ բնաւ դասախօս:

Շուրջ երեք տարի յառաջ Առաջնորդ հայրը կազմակերպեց մի Ուսումնական Խորհուրդ, փորձ և հմուտ անձերէ, սոյն մարմին իսկոյն սկսաւ աշխատիլ վարժարանի

ճշմարիտ բարենորոգման. զգաց թէ դպրոցի համար կրթական տեսչի պէտքն անհրաժեշտ է, ուստի քաղաքիս կարող դաստիարակներէն Յովհաննէս էֆ. Թորիկեան տեսչ կարգուեցաւ. սակայն աշակերտք՝ ապիկար կուսակցութիւններէ դրդեալ չընդունեցին սոյն տեսչութիւն. կռիւն սկսաւ. տղայք յանդգնեցան Ուսումնական Խորհրդոյ դէմ ելնել և ապա խնդիրը ներկայացուեցաւ Առաջնորդին, բայց ըստ որում անկարգութեանց առաջըն չը կրցաւ առնուիլ, Ուսումնական Խորհուրդն վեցամեայ կիսկատար պաշտօնավարութենէ յետոյ պարտաւորեցաւ հրաժարիլ:

Քանի մը ամիս յետոյ Առաջնորդը կը կազմակերպէ մի այլ Ուսումն. Խորհուրդ, ուսումնասէր և խոհեմ երիտասարդներէ, որք օրինակելի եռանդեամբ գործել կ'սկսին, և վարժարանն ըստ կարելոյն բարեկարգելով, հնգամեայ շրջանէն մը յետոյ կը յաջողին կարգ մը ընթացաւարտներ հանել: Ապա տեսուչ կը կարգուի Քարհատցի Պ. Մանասէ Սուլթանեան: Գ2 սեպտեմբերի նոր շրջանին՝ Հայերէնի դասախօսը կը հրաժարի, և անոր կը յաջորդէ հանրածանօթ աղանդաւոր Մանուկ էֆ. Նորհատեան: Դպրոցական կռիւն նորէն կ'սկսի: Վարդգեսն անուամբ վարժարանէն արտաքսեալ ոչ-չըրջանաւարտ տղու մը պատճառաւ, որ կողմնակցութեանց շնորհիւ կը յաջողի Ընտելաբանի դասախօս կարգուիլ, Տեսուչ և Նորհատեան կը գտնուին միմեանց հետ: Վարդգէս Իսթամբուլուեան անուն դասախօսն եւս գործին միջամուտ կը լինի. դպրոցին բարեկարգութիւնը կը խանդարի, այն ատիճան որ աշակերտք կը յանդգնին Ուսումն. Խորհրդոյ անդամոց վրայ յարձակելու, որք մազապուր խոյս կուտան դպրոցէն: Բարեբաղդաբար Քաղաքական Ժողովը կը միջամտէ, ամբողջ պաշտօնէութիւնը կը փոխէ և վարժարանը վերստին կը հանգարտի:

ՏԱՃՍՏ

ՏԱՐՍՈՆ. Գ3 Մայիս 3. — Տեղւոյս ազգային վարժարանք տակէ առաջ Միացեալ ընկերութեան հսկողութեան ներքեւ էին և այնպէս մնացին երեք տարի շարունակ. բայց որովհետեւ տեղացիք մէն մի աշակերտի համար սահմանեալ 10-15 դրուշ ամսաթուղար վճարելու դժկամակեցան և յիշեալ ընկերութեան վճարելի տարեկան 85 օսմ. ոսկւոյ դումարն անվճար մնաց, ընկերութիւնն ալ ձեռք քաշեց մեր դպրոցներէն, որք ցաւալի վիճակի մ'ենթարկուեցան այս պատճառաւ՝ տակէ 7 ամիս առաջ՝ Քանի մ'առաջնակարգ աղայներ, այս վիճակը տեսնելով, փոխանակ վարժարանի բարեկարգութեանը աշխատելու, իրենց զաւակները ձինտնեանի «բողքականաց» վարժարանը կը տանին՝ 186 դրուշ կանխիկ վճարելով. մինչդեռ ազգային վարժարանին համար արծաթ մ'անգամ վճարել կը դժուարանային:

Այժմ, մերայնոց վարժարանն բարեղք վիճակ մը ստացած լինելով, Զանաթրութեամբ քանի մը ուսումնասէր ազգայնոց և շնորհիւ տնօրէն-դասատու Գ. Ս. Արսէնեան էֆէնտի և զաստուուաց Թաթուլ էֆէնտի և այլոց, մերայնոց վարժարանը բարեղք վիճակ մ'առած լինելով, կը դասախօսուին Հայերէն, տաճկերէն, գաղղիերէն, թուրքանովի և գաւառական վար-

ժարանաց վերաբերեալ քանի մը կարեւոր ուսումներ: Յաւալին այն է որ, երբ բողքականաց վարժարանը երթեւեկող տղայոց ծնողաց կ'առաջարկուի. «ահա՛ ձեզ կանոնաւոր վարժարան, այլ ևս հոն մի զրկէք ձեր զաւակները», կը պատասխանեն. «նախ որ ահագին գումար մը վճարած եմք արդէն. երկրորդ՝ ինչպէս զրկել կարելի է մեր զաւակներն որ բողքականաց քով կ'ուսանին անգղիերէն և կ'երգեն իբրեւ սոխակ. հայերէնն ինչ օգուտ ունի. երբ մեր անձնական շահուն չծառայէր»: Կը տեսնենք ձինտնեանի վարժարանի աշակերտներէն շատերը, կը հարցնենք. «պարոն, ինչ կ'ուսանիք». «ինկլիլիզէն». հայերէն ալ դաս կ'առնէք. «չաբաթը մէկ անգամ». յետոյ խորին հառաչ մ'արձակելով՝ կ'աւելցնեն. «հեռու սուրբը զօրաւոր կ'ըլլայ եղբր, սըխալեցանք, մենք շատ բաներ կը յուսայինք, հակառակը կը գտնենք այժմ»: Իրաւ ալ տարի մը գացող աշակերտը յաջորդ տարին չերթար: Այժմ ձինտնեանի խնամոց ներքեւ կը գտնուին 60-70 ի չափ պատանիք: Գործ չունիս պոռա՛, գոչէ՛, թէ հոն գնացող տղան մէկ քանի տարուան մէջ իւր դաստիարակին վարուց և բարուց կը համակերպի, հեռը կը նայնանայ, կ'օտարանայ իւր կրօնքէն և եկեղեցիէն, և իցիւ թէ միայն ինքը լինէր, իրեն հետ ընտանիքն ալ, քանի մը ընկերներ ալ:

Կիլիկիոյ Տ. Տ. Մկրտիչ Կաթողիկոսն Ապրիլ 2-ին հոս եկած լինելով, ութ օր մընաց և ազգային այս անկարգութեանց վերջ տալու համար մեծ Զանք ըրաւ. նոր Թաղ. Խորհուրդ մը կազմեց, վերահաստատեց Աթոռային իրաւունքներն և կիրակի օրն ալ իւր աղբու և հոգեգրաւ բաւիւք բացատրեց անձնիւր տիոց պարտքն առ Աստուած, առ ազգն և առ տիրապետող հայրախնամ մեծազոր կայսրութիւնն: Փառաւորեց տեղւոյն նորաչէն Ս. Աստուածածին Եկեղեցւոյն Խաչկալի նուիրատու Ունճեան Արիկ էֆէնտին: Ս. Կաթողիկոսն ասկէ Մերսին մեկնեցաւ և երեք օր հոն մնալէն յետոյ, դարձաւ Ատանա:

Կ. ԿԻԻՄԻՇԵԱՆ

ՄՈՍԿՈՒԱ. — Մեծանուն երգիչ Պ. Շահլամեանց գնաց իւր ծննդավայրը. մի ամսէն պիտի վերադառնայ Մոսկուա, ուր մըտադիր է համերգ տալ. պիտի երգէ հայերէն, Ռուսերէն և Իտալերէն:

Ռուսիոյ Կայսրն, իւր թագադրութեան տարեգարծին առթիւ քաղաքս եկած լինելով, ի պատիւ իրեն մեծամեծ հանդէսներ կատարուեցան. մայիս 14-ին տեղի ունեցաւ Ալէքանդր Բ. ի փառաւոր արձանին հիմնարկէի արարողութիւնը՝ ի ներկայութեան կայսեր, կայսերական տան, եկեղեցական, զինուորական և քաղաքային մեծ անձնաւորութեանց և 6-7 հարիւր հազար ժողովրդականաց: Մոսկուայի Հայոց եկեղեցւոյ խորհրդականաց ընտրութիւնը կատարուեցաւ Գասպարեան անկեղանոցի մէջ. ընտրուեցան Պ. Գրիգոր Շանչեանց, Պ. Ստեփան Յովհաննէսեան՝ ճարտարագետ և Մկրտիչ Բարխուդարեանց՝ ազարանատէր. առաջինն հրաժարական տուաւ: — Քաղաքիս Հայոց քահանայ Տ. Ղ. Յովսէփեանց մեր Շարականներ և հոգեւոր երգեցողութեան մա-

սին ուսումնասիրութիւն մը պատրաստելով մատոյց Սինդայսեօէ բարձր վարժարանին տեսուչ-ուսուցապետին որ՝ ի նշան մեծի գոհունակութեան՝ ուսուցչաց և աշակերտաց առջեւ համբուրեց քահանային ճակատը:

## ԼՈՒՍՍՏՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Կենդանեաց վրայ տեսնուած այն երեւոյթներէն՝ որք միշտ մարդոց սքանչացման առարկայ կը լինին, մին եւս՝ կենդանեաց մի քանի ցեղերուն լուսատու լինելն է:

Ամառնային գեղեցիկ գիշեր մը, երբ դաշտը պտուղիք, յաճախ կը տեսնեմք լուսատու կայծօռիկը, որ խոտի կամ մացառի մը մէջ աստղի նման կը փայլի: Որպէս կը կարծուի, կայծօռիկը որդ մը չէ, միջատ մ'է պատեանաթեւերու կարգէն. արու կայծօռիկը շատ տարբեր է էգէն, թեւեր ունի և կը թռչի, սակայն լուսատու չէ, իսկ էգը թեւեր չունի և որդի մը կը նմանի, թէ և իւր երեք զոյգ օտքերը յայտնապէս կը ցուցնեն թէ միջատ մ'է նա: Միայն էգ կայծօռիկը օժտուած է լոյս արտադրելու յատկութեամբ. լոյսը անոր մարմնոյն վերջին երեք հատուածներուն փորի կողման երեսին վրայ կ'արտադրի. ցորեկը քարերու տակ կ'ապրի, իսկ գիշերը սնունդի համար դուրս կ'ելնէ և դանդաղօրէն կը սողայ: Զարմանալին սա է որ կայծօռիկը թրթուր և որդ վիճակի մէջ և մինչեւ իսկ իւր ձուն լուսատու են: Կայծօռիկի մի ուրիշ տեսակին էգը փոսուռայ (Luciole) կ'անուանուի և շատ կը գլտնուի յիտալիա և ի Թուրքիա. կրնայ արուին պէս թռչիլ. կ'երեւի թէ կենդանին երբ որ ուզէ՝ յայնժամ կը ցուցնէ իւր լոյսը որ ընդմիջմամբ և յանկարծակի կը լինի. գիւլթական տեսարան մը կը լինի երբ փոսուռայից խումբեր ասուպներու նման օդին մէջէն կ'անցնին, մերթ իրենց լոյսը շիջանելով և մերթ վառելով:

Որչափ յառաջանամք դէպ ի տաք երկիրներ, այնչափ կը բազմանան լուսատու միջատներ, որոց լոյսն ալ աւելի զօրաւոր է: Ճրագակիր հօթին անուամբ 4-5 սանթրիմէր երկայնութիւն ունեցող կիսաթեւերու կարգէն միջատ մը՝ որ Զինու հարաւային կողմ մը շատ կը գտնուի, գիշերը կատոյց կամ կանանչ նշոյլով կը փայլի. իւր անունն առած է գլխուն ձեւէն որ գլանաձեւ երկայն մոմի կը նմանի:

Ի Պրագիլ և ի Կոյանա լապտերաւոր Ֆիլիկոն անուամբ ուրիշ կիսաթեւ մը կը գտնուի, որուն խոշոր գլխուն կողմը լապտերի մէջ գրուած մոմի նման կը փայլի:

Վերոյիշեալներէն շատ աւելի նշանաւոր է Ամերիկայի արեւադարձային երկիրներու մէջ գտնուող պատեանաթեւ մը որ 5-6 սանթրիմէր երկայնութիւն ունի և կ'անուանուի Ֆիլոփոր, ընդհանրապէս ծանօթ ֆոֆիլոս անուամբ. լուսատու երեք գործարաններ ունի, որոց երկուքը կարծքին քովը, և մին ալ շատ աւելի մեծ՝ փորին կողմը. այս երրորդ գործարանը միայն յայնժամ կը տեսնուի երբ միջատը թռչի: Ֆիլոփորի լոյսը շատ զօրաւոր է, գիշերը ոչ միայն կարելի է կարդալ գրել, այլ և Ռ. Տիւպուա ասոնցմէ բաւական թուով խաւար սենեկի մը մէջ դնելով, անոնց լուսով կըր-

ցած է լուսանկարներ ստանալ: ԺԶ. դարու ճանապարհորդ մը, Օ. Վալտեր, կը պատմէ թէ այս միջատը բնակներուն իրը լապտեր կը ծառայէ. կ'երեւի թէ պատերազմի ժամանակ Հայկիթի բնակիչք այս կենդանին իրը նշան ճանաչման գործածած են: Այս միջատ ի Հալանա Եւրոպայի կանանց զարդերն է. տանք իրենց մազերուն մէջ կը դետեղեն ուր սաստիկ լոյսով կը փայլի, ու մանք ալ փոքրիկ շղարչէ տոպրակներու մէջ դնելով իրենց շրջագոգեստին ծաղերուն մէջ կը տեղաւորեն. հնդկիներ զայս կը գործածեն իրենց բնակարաններէն մթնոլորտը հեռացնելու համար, որք այդ կողմեր շատ կը գտնուին. ճամբորդներէն սմանք եւս խորհած են գիշերներն իրենց կօշիկներուն վրայ դնել, որպէս զի անոր լոյսին օգնութեամբ կարենան ճամբուն վրայ գտնուող օձերը փոխոյնել:

ԱՅՆԹԱՊ

ԹԱԹՈՒԼ ՔԻԻՅԷԼԵԱՆ

### ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԲԺՇԿԻՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՏԱՐԱՓՈԹԻԿ

ՀԻՒԱՆԳՈՒԹԵԱՆՑ

Կարմրախ (գըզըլ, scarlatine). Այս հիւանդութիւնը շատ լուսնամուկու է: Ամենէն գէշն այն է որ խաղաղարտներուն անցնելն վերջը շատ անգամ ուրիշ հիւանդութիւններ կուգան: Կարմրախէ բռնուողներուն քով մարդ հանդպցնելու չէ: Հիւանդին կզկանքն, թուքն, փսխումքն, մէզն հակաանխտականի պէտք է ենթարկուին Սիւլֆաթ իւրիւրի միջոցաւ (մէկ լիտրի համար 50 կաւմ): Ծեմիւններուն համար ալ նոյն հակաանխտականը պէտք է գործածել: — Հիւանդը՝ աղէկնալէ վերջ՝ ամբողջ մարմնով աճառով լուացուելու է ու անկէ՝ յետոյ դուրս ելնելու է: — Հիւանդութեան առաջին օրէն հաշուելով՝ առ նուազն քառասուն օրէն առաջ նորէն դպրոց երթալու չէ:

Վարդախ (գըզմուք). — Այս հիւանդութիւնը չափազանց տարափոխիկ է, մանաւանդ առաջին օրերուն մէջ, այն միջոցին երբ տղուն վրան դուրս կուտայ, աչքերը կը կարմրին ու կ'արցունքոտին, քիթը կը գոցուի ու կը հագայ: — Կը հասկըցուի ուրեմն որ հիւանդին քով ուրիշ մարդ երթալու չէ, մանաւանդ հինգ տարեկանէ վար տղայ, որովհետեւ այդ տղայ վրայ աւելի ծանր կուգայ հիւանդութիւնը: Այս զգուշութիւնը տեւելու է հիւանդութեան սկիզբէն հաշուելով մինչեւ առ նուազն 18 օր: Աւելորդ է ըսել թէ նոյնքան օրէ վերջ միայն դպրոց վերադառնալու է. բաց տալի, հիւանդն աղէկնալէ վերջ աճառով լուալու է ամբողջ մարմնը, բայց սպասելու է որ ցնցւային հարբուղին անցնի:

Կապուս հազ. — Այս աստը, որ խիստ տարափոխիկ է, շատ անգամ վտանգաւոր է անոր համար մանաւանդ որ ուրիշ հիւանդութիւններ ալ կրնայ բերել. մանաւանդ ապէս երկու տարեկանէն վար, մէկ մ'ալ տկարակազմ տղոց համար վտանգաւոր է: Հիւանդին քով մարդ երթալու չէ: «Ըսե-

լով ալ չը ճանճրացա՞ր, մարդ Աստուծոյ», պիտի բռնէ, գիտեմ, ձեզմէ շատեր, «քանի որ տարափոխիկ է, հարկաւ հիւանդին քով մարդ երթալու չէ: մէկ ըսիր, երկու ըսիր, հասկցանք»: Հոգ չէ, շատախօս, չաղիւղի, դեռ չը գիտեմ ինչ անուանեցէք զիս, բայց այդ կրկնուած խորհուրդն միտքէ մի՛ հանէք: Քանիներ զոհ կ'երթան անխոհեմութեանց...:

Հիւանդին լաթերը հակաանխտականի եմբարկել. — Բոլոր այս տարափոխիկ հիւանդութեանց տեւողութեան միջոցին, և հիւանդութիւնը վերջանալէն ետքն ալ, հիւանդին լաթերը, վերամալը, սաւանը, ևայլն, պէտք է մէկ լիտր ջուրի մէջ 50 կաւմ սիւլֆաթ իւրիւրի ստացուած հակաանխտականին ենթարկել: — Հիւանդին գործածած դեղալը, դաւաթը, և այլն, պէտք է անմիջապէս եռացնալ ջուրով լուալ: — Հիւանդութեան միջոցին, սենեկին փոշիները ամէն օր առնելու և անմիջապէս այրելու է: Աւելի առաջ, տախտակամանին վրայ սիւլֆաթ իւրիւրի թեթեւ լուծուածք (12 կաւմ 1 լիտրի համար) սրսկելու է:

Հիւանդին սենեակը հակաանխտականի եմբարկել. — Հիւանդին աղէկնալէն վերջ, անոր սենեակը հակաանխտականի ենթարկելու է հետեւեալ կերպով:

Պատուհանները խփել թուղթ փակցնելով. աւաղի վրայ ծծումբ դնել, որոյ քանակութիւնը սենեկին ընդարձակութենէն կախումն ունի (մէկ խորանարդ մէդրի համար 60 կաւմ): Այս ծծումբին վրայ ալքօօլ (ըթիլթո) թափել, զոր պէտք է փռնկցնել ու սենեկէն դուրս ելնել: Դուռը աղէկ մը գոցել և դուրսէն անոր բացուածքները գոցել: Հետեւեալ օրը, սենեկին պատուհանները և դուռը քանի մը ժամ բաց ձգել:

Ծխման (քիւրսիւ) միջոցին անկողինը աղէկ մը բանալու է: Յ. Թ. Հ.

### ՎԻՐՆԻՐԻՉ ԹԻՉՈՒՆՔ

Եթէ կարելի ըլլայ մի առ մի քննել գոյութիւն ունեցող բոլոր կենդանիներն, պիտի տեսնուին այնքան տարօրինակ տեսակներ, որք արդարեւ հիացումն և տալու թիւն պիտի պատճառեն մարդ կալին: Ասոնցմէ են այն վիրանորիչ ըսուած թռչունք և ձկունք որք յատուկ են. նոր-Աշխարհի, թէ և իրենց մէկ տեսակն ալ Ափրիկէի մէջ կը գտնուի: Ասոնց բուն անունն Ժագանա է և բնագէտը կոչած են զանոնք «Ժագանա արմա», այսինքն զինեալ Ժագանա: Ասոնք անտառներու մէջ չեն ապրիր, այլ ջրարբի և մշտաթաց տեղեր՝ որսալով զանազան կենդանիներ և ձձիւներ, որք իրենց միակ սնունդը կը կազմեն: Որովհետեւ ընդհանուր օրէնք է որ էն պղտիկ կենդանիներն անգամ ունենան զէնք մը՝ ի հարկին իրենք զիւրենք պաշտպանելու համար ուրիշ կենդանեաց դէմ, բնական էր որ Ժագանան ալ ունենային իրենց յատուկ զէնքը: Արդ, Ժագանան իրենց երկու թեւերուն ծայրն ունին մէկ մէկ սրածայր և խիստ զօրաւոր օսկոր, որ իրենց կը ծառայէ իրրեւ պաշտպանողական զէնք, Ժագանաներու թեւերն ալ շատ աւելի զօրա-

ւոր են՝ իրենց տեսակին պատկանող ուրիշ ու և է թռչնոյ թեւերէն: Այս է պատճառն որով Ժագանաներն ի հնումն «զինեալ» և այժմ «վիրաւորիչ» կոչուած են: Ժագանաներն իրարմէ կը տարբերին իրենց փետուրներու գոյներով. կան թխագոյն, դեղին և այլ գոյներով Ժագանաներ. իրենց գոյներու հետ իրենց բնակավայրերն ալ կը փոխուին. տարբեր գուռաւոր փետուրներով Ժագանաներ մի և նոյն երկրին մէջ չեն բնակիր. այսպէս Մեքսիկայի, Պրէզիլիոյ և Սէն Տօմինիկի Ժագանաներն չեն նմանիր իրարու: Ամերիկայի Ժագանաներն շատ աւելի հետաքրքրաշարժ են քան Ափրիկէիներն:

Վիրաւորիչ ձուկեր ալ կան որոց աքիները վերջացնող երկու ծայրերն խիստ բարակ և չափազանց սուր են, այնպէս որ կըրնան անոնցմով վիրաւորել և տապալել իրենց վրայ յարձակող ուրիշ կենդանիներն: Բազմաթիւ են նաեւ վիրաւորիչ ձկներու տեսակներն:

Յ. Մ. ԱՋՆԱԽՈՐԵԱՆ

### ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրօն. Ժողովը Պատր. Փոխանորդ Հօր կողմանէ երեքշաբթի օր հրաւիրուած էր ինխատ գումարիլ, Թէ և անգամք ներկայացած էին, բայց առանց նիստ կազմելու ցրուեցան, չուզելով գումարուիլ ի բացակայութեան նախագահ Սրբազան Հօր:

— Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Մկրտիչ Սրբազան, որ Ժամանակէ մը ի վեր Ատանա կը գտնուէր, վերադարձեր է Սիս:

— Պանորմայի և Պալքէսէրի Պատր. Փոխանորդ Տ. Յովսէփ վարդ. Այվադեան մայրաքաղաքս եկած է, զանազան խնդրոց մասին Պատրիարքարանէն անօրինութիւն մը խնդրելու համար:

— Այրի տիկին Մելիք-Յակոբեան թիֆլիսէն Պաթում գացեր է, ուսկից Շիքալիօ պիտի ուղեւորի եղեր՝ Գոլումպեան ցուցահանդիսին մէջ ի տես դնելու համար դրամներու, հագուստներու և այլ հնութեանց հաւաքածոյներ, զորս քսան տարուան մէջ ի Պարսկաստան հաւաքեր է:

— Տեղական թուրք թերթ մը, Թէր-նիմանը-Հալիքար, հինգշ. առուր թուով ծանուցած է թէ «Հայոց շնորհուած կայսերական Ֆէրմանին 32 ըդ. տարեգարձին առթիւ, Պատր. Տ. Խորէն Աշրքեան յառաջիկայ կիւրակէ կրօն. արարողութիւն պիտի կատարէ և մաղթանքներ պիտի ընէ վասն կենաց Վեհ. Սուլթանին»:

— Տ. Մատթէոս Եպիսկ. Իզմիրեան ի Գուգլունճուք և Տ. Գրիգորիոս Եպիս. Յովհաննէսեան ի Գուրուչէճէ Ս. Պատարագ պիտի մատուցանեն վաղը:

— Փատր-Գիւղի նորընտիր Թաղ-Խորհրդոյ պաշտօնը վաւերացնող Կոնգալը նախընթաց կիւրակէ յանձնուեցաւ:


տեղւոյն քարոզիչ Սրբազանին՝ եկեղեցւոյ դռնէն անարտաճախ պահուն. հետեւաբար ընթերցումն յետաձգուեցաւ. շաբթուան մէջ՝ ընտրեալք հրաժարագիր զրկեցին, ուստի եւ հարկ եղաւ թէ՛ կոնդակն եւ թէ՛ հրաժարագրերն Պատրիարքարան ուղղել եւ պատշաճ անօրինութիւն խնդրել. Գաղ. Ժողովն անընդունելի դատեց հրաժարականներն եւ կոնդակը վերագարծուց, յանձնարարելով քարոզիչ Սրբազանին՝ կոչել ընտրեալներն ու յորդորել որ ըստ անձնեն խորհրդականութեան պաշտօնը, միանգամայն եւ կարգացնել կոնդակն յատենի եկեղեցւոյ:

Կ'երեւի թէ այս՝ ըստ երեւութին պարզ խնդրոյն մէջ անձնականութիւնք կարեւոր դերեր կը խաղան, որու հետեւանքն անշուշտ փնաս կը բերէ եկեղեցւոյն պայծառութեան եւ վարժարանին բարեկարգութեան:

— Կը յիշուի թէ Մաքրի-գիւղի նոր թաղ. Խորհրդոյ ընտրութեան դէմ մաս մը գիւղացիք բողոքած էին Պատրիարքարանի: Գաղ. Ժողովը փէշլիվանեան Տ. Խորէն Աւագ քահանային պաշտօն յանձնեց քննել եղած բողոքներն եւ արդիւնքը տեղեկագրել:

— Տխրաբերի Առաջնորդական փոխանորդ Տ. Յարութիւն Գահանայի առաջարկութեան համաձայն, Գաղ. Ժողովն որոշեց խնդրել Բ. Դուռնէն՝ անոր պաշտօնին համար հարկ եղած հըրամանագիրը:

— Տնտեսական Խորհուրդն չորեքշաբթի օր զբաղեցաւ Լաթիֆեան եղբարց հողմանէ Ակնայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կողակէտ Սէօքէի ագարակի խնդրումն, եւ ինչ ինչ անօրինութիւններ ըրաւ:



Աստիճան. — Բաղրայի աստիճան տըրուեցաւ օտար մամուլի գիւտին գրաքննիչ Կիւթի Էֆէնտի, քարտուղար Սաշիկ Էֆէնտիի ու Խարհաթի պէյի:

Պատուաւան. — Դ. Կարգի Մէճիսիլի պատուանշան տրուեցաւ Կիրատոնի գայմադամ Ալի Նէվզատ պէյի եւ օտար մամուլի գիւտին քարտուղարներէն Մանաս Էֆէնտիի:

— Առողջապահական երեք քննիչներ կարգուած են Սեւանիկի, Տրապիզոնի եւ Պատրայի համար եւ ի մօտոյ պիտի մեկնին մայրաքաղաքէս:

— Իզմիրի վերաքննիչ ատենին ընդհ. դատարանը Աշնան Տիրան Էֆ. նահանգին ներսերն ուղեւորեր է, դատարանաց վիճակը քննելու համար:

— Կեսարիոյ, Եօզրատի ու Գըրշէհրի հեծեալ ոստիկան-զինուորաց գունդերուն վրայ, Կայսերական Իրատի մը համաձայն, 70 հեծեալ ոստիկան-զինուորներ պիտի աւելցուին:

— Զմիւռնիոյ մէջ սառուցի գործարան մը հաստատելու մենաշնորհ ստացած է Շիւքրի Էֆէնտի:

— Երկրորդ պարգեւը Բուսէլի երկաթուղեաց վերջին վիճակահանութեան, 25,000 Փրանք, շահեր է ի Պոլիս. Մէրճան չարչը, Եալուզ խան հաստատեալ Ամասիացի ծանօթ յանձնակատար Կիւրիանոս Էֆէնտի Կիւրիանոսեան:

10,000 Փրանք շահեր է Ղալաթիոյ Հայ բեռնակիրներէն մին որ հինգ զուրուշի բաղդատում (prodex) մը գնած էր:

— Մրաքիւ մը. Մաքսային վերատեսչութեան թարգմանութեան սենեկին տնօրէնի օգնական Ժաք Լէօն Էֆ. առաջարկած է կառավարութեան՝ ծանուցման տախտակներ դնել տալ խանութներու, խաներու, բաղնիքներու եւ այդ կարգի հաստատութեանց վրայ, այդ տախտակներուն համար թուրքերէն լեզուն պարտաւորիչ ընել, անոնց տուրքն երեք կարգի բաժնել, եւ հանրային կարգապահութեան տեսակէտով՝ մասնաւոր նշան մը դնել տախտակներուն վրայ՝ ցոյց տուող թէ՛ այդ հաստատութեանց տէրն ո՛ր տէրութեան հսկատակ է: Ժաք Լէօն Էֆ. կը յուսայ տարեկան 40-50 000 ոսկոյ հասոյթ մ'արտադրել:

— Ի Զմիւռնիա, հունձքերը բաւական յաջող կ'երեւին. թուղի հունձքը կը յուսացուի մինչեւ 80,000 բեռ, այսինքն 20,000 բեռ աւելի նախորդ տարիէն. չափիչը գրեթէ նախորդ տարւոյ չափ. ափսոսի հունձքը այժմէն 5000 կողովէ աւելի կը հաշուուի:

— Եվգամիի նախարարութիւնը հրամայած է իւր գիւտներուն որ առանց քէզ-էքէի սեղանաւորութիւն ընող անձանց գործերը չտեսնուին:

### ՀՐԱՆԷՐ

Հէգ. երկտասարդ. ուսուցիչ մը ամիսէ մը ի վեր հիւանդ պառկած է՝ ապրուստի յետին միջոցներէ զուրկ: Աշխարհի վրայ մայր մը միայն ունի, ծերունկ՝ գողդոչուն՝ եւ նմանապէս հիւանդ. մայր մը, որուն խնամոց ապաստանած է եւ որ կը կարօտի իւր խնամոց: Մայր ու զաւակ հիւանդ եւ յետին չքաւորութեան մէջ: Կը հրաւիրուին բարի եւ զգայուն մարդիկ օգնութեան ձեռն կարկառելու:

Մաղիկի Խմբագրութիւնը պատրաստ է ընդունելու նուիրուած գումարներն եւ հասցնելու այդ գութաղբներուն: Նուիրատուութիւնք կրնան զրկուիլ նաեւ Սկիւտար, Մեղզուրեան վարժարանի Տէր եւ Տնօրէն Մեղզուրեան Մեծ. Մկրտիչ Էֆէնտիի:

ՄԻՋՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ի ՐԱԿԱՆ

### ԿԵԱՆՔԻ ՆՈՒԱԳՆԵՐ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գին 2 Ղրուշ

### ԳՈՒՄ ԳԱՐՈՒԻ ԽՂՃԱՄԻՏ ԲԺԵԿՆ

Շաբաթ աւուր Արեւելի մէջ զարմանօք կարգացի Մայր եկեղեցւոյ գիւտին մէկ երկտուղ նամակն, որով շնորհակալութիւն կը յայտնուէր Տօք. Ռօպէնսօն Էֆէնտիի՝ գաւառացի հիւանդ երիտասարդ մը օրիաքար զարմանելուն եւ առողջացնելուն համար:

Այս օրիաքար զարմանումը մենք չը կրցանք հասկնալ. չէ՞ մի որ Տօք. Ռօպէնսօն Աղքատախնամ ընկերութեան ամսականաւոր բժիշկն է, եւ ի պաշտօնէ պարտաւոր է զարմանել ընկերութեան կողմանէ իրեն ներկայացուած աղքատ հիւանդներն: Մնաց որ, եւ այս ամենէն կարեւոր պարագայն է, եթէ Թաղ. Խորհուրդն պարտաւորութիւն կը համարի հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել Աղքատախնամ ընկերութեան բժիշկին՝ աղքատ հիւանդ մը զարմանելուն համար, փոխադարձաբար ինքզինք պարտաւոր համարելու չէ՞ նաեւ ձայն բարձրացնել եւ հրապարակաւ պարտաւել նոյն խղճամիտ բժիշկն՝ որ մերժած էր տեսնել ու զարմանել ինձ նման աղքատ մարդու մը հիւանդ զաւակը, եւ ԱՌԱՅՅ ՀԻՒԱՆԴԸ ՏԵՄՆԵԼՈՒ ԴԵՂԱԳԻՐ ՏԱԼՈՎ՝ զաւկիս մահուանը գուցէ պատճառ եղած էր:

Զաւկիս մահուանը առթիւ Գումգաւուրի մէջ տիրող գայթակղութիւնը բուժելու համար է արդեօք որ Թաղ. Խորհուրդը անանուն եւ անյայտ երիտասարդ մը հրապարակ նետելով եւ անոր զարմանումն պատրուակելով, հրապարակային շնորհակալութիւն մը յայտնելու հարկին մէջ գտած է ինքզինքը:

Զեղծումն ի պաշտօնէ քաջալերել չէ՞ այս:  
25 մայիս 93 ՊԵՏՐՈՍ ՍԱՔԱԼԵԱՆ  
Գում-Գաւուր

### ԱՔԻԿԵԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Խնտամեան Էֆէնտիի կողմանէ ստացանք ընդարձակ պատասխանագիր մ'եւս ուղղեալ առ Մեղիտոսեան Էֆէնտի: Քննադատութեան առարկայ եղած կէտերու մասին երկուստեք արդէն բաւական գրուած լինելով, եւ նկատելով որ, Մաղիկի անձուկ սիւնակներուն հակառակ, վիճարանութիւնը չուտով վերջ գտնելու երեւոյթ չունի, միւս կողմանէ նկատելով նաեւ որ՝ Խնտամեան Էֆ. արդէն առաջարկած էր խնդրել Մէարիֆի Ժողովոյն որոշման ենթարկել, եւ Մեղիտոսեան Էֆէնտիի ալ նոյն առաջարկութիւնն ընդունած էր, զանց կ'ընեմք հրատարակութիւնն Խնտամեան Էֆէնտիի պատասխանագրոյն, լրագրական հրապարակի վրայ վէճն արդէն փակուած համարելով:

| Ա. Բ. Ժ. Գ. Դ. Ա. Մ. Ռ. Յ. |        | Գում. իրան 100 զրշ. էն |        |
|----------------------------|--------|------------------------|--------|
| Մէճիսիլի                   | 107 30 | Բուսիդի բօլ            | 90 20  |
| Քառորդ մէճիս               | 107    | Նարուէն                | 87 20  |
| Մանր մէճիս                 | 103    | Կրիմից                 | 51 17  |
| Մէթալիք                    | 97     | Անգլ. իրա              | 110 11 |
| Մանէթ թղթադրամ 8 54        |        |                        |        |
| Գոնալիտ                    | 24 13  | Բուս. երկ.             | 89 5/8 |
| Թահլիլ. Օսմ.               |        | Թապիլէ                 |        |

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԼԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ  
Էսկի-Ջապիէ փողոց, քիւ 61